**Արձանագրություն N 3**

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կարիքների համար <<Տնտեսական, սանիհիգիենիկ և լվացքի միջոցների>> ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» ապրիլի 2016թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.**

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետև՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Օճառ, ձեռքի | 205160 |
| 2 | Օճառ, հեղուկ | 213760 |
| 3 | Մաքրող նյութեր | 62300 |
| 4 | Մաքրող մածուկներ և փոշիներ | 266000 |
| 5 | Լվացող նյութեր | 131040 |
| 6 | Կահույքի փայլեցման միջոց | 171000 |
| 7 | Հատակի մածիկ (մաստիկա), հատակների փայլեցման և մակերևույթի պահպանման համար | 23680 |
| 8 | Աղբարկղ, մետաղյա | 87000 |
| 9 | Սպունգ, աման լվանալու | 30160 |
| 10 | Ավել գոգաթիակի հետ, պլաստմասե | 179200 |
| 11 | Աշխատանքային ձեռնոցներ | 143400 |
| 12 | Զուգարանի թուղթ, ռուլոնով | 820800 |
| 13 | Դույլ, պլաստմասե | 77400 |
| 14 | Ավել, սովորական | 421200 |
| 15 | Ցախավել | 16200 |
| 16 | Հոտազերծիչ, օդի | 151700 |
| 17 | Էլեկտրական լամպ 60W, 80W, 100W | 1065500 |
| 18 | Ցերեկային լամպ 60սմ | 592000 |
| 19 | Ցերեկային լամպ 120սմ | 585000 |
| 20 | Լամպերի դրոսելներ | 574000 |
| 21 | Տնտեսող լամպեր | 771600 |
| 22 | Խոզանակներ | 98000 |

| | | |
|---|---|---|
| 23 | Զուգարանի խոզանակներ | 114000 |
| 24 | Ջրի ծորակ, փական | 123000 |
| 25 | Սանդուղք, մետաղյա | 140000 |

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

**2.1** «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի, «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի, «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի, «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի, «ՄԱԳՆԱՏԷՍ» ՍՊԸ-ի և «ՆԵՑՈՒԿ-438» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2.2** Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերից միայն <<Գնի առաջարկը>>՝ Հավելված 4, հրավերով պահանջվող մյուս փաստաթղթերի մասով՝ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ-ի կողմից Համակարգում /www.armeps.am կայք/ հրավերով պահանջվող թիվ 1, 2, 3.2, 3.3, 3.5, 3.6 և 4.1 հավելվածները կցելու համար նախատեսված մասում կցված են սկանավորված, դատարկ JPG ձևաչափի ֆայլեր: Ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով՝ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ-ին կառաջարկվի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2.3** Համակարգը թույլ չի տվել բացել Մարինա Սաֆարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը՝ միևնույն ժամանակ այն համարելով հետագա գնահատման համար անընդունելի:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**3.1.1** «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի և «ՆԵՑՈՒԿ-438» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտերում ներառված փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, վերջիններս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3.1.2** «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ՝ <<Ընթացակարգին մասնակցելու դիմումի>>՝ Հավելված 1, որտեղ <<7.5 կետի 1-ին ենթակետով>> բառերի փոխարեն պետք է լինեն <<7.5 կետի 2-րդ ենթակետով>> բառերը:

**3.1.3** «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ <<Ընթացակարգին մասնակցելու դիմումի>>՝ Հավելված 1, որտեղ հստակ սահմանված չէ՝ յուրաքանչյուր չափաբաժնում նշված ապրանքը /ապրանքները/ որ երկրի արտադրության ապրանք /ապրանքներ/ է /են/ հանդիսանում:

**3.1.4** «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ <<Ընթացակարգին մասնակցելու դիմումի>>՝ Հավելված 1, որտեղ <<7.5 կետի 1-ին ենթակետով>> բառերի փոխարեն պետք է լինեն <<7.5 կետի 2-րդ ենթակետով>> բառերը:

**3.1.5** «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ

ա/ <<Ընթացակարգին մասնակցելու դիմումում>>՝ Հավելված 1, <<7.5 կետի 1-ին ենթակետով>> բառերի փոխարեն պետք է լինեն <<7.5 կետի 2-րդ ենթակետով>> բառերը,

բ/ <<Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ, մատակարարելու վերաբերյալ>> հայտարարության՝ Հավելված 4.2, շարադրանքը թերի է:

**3.1.6** «ՄԱԳՆԱՏԷՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ. «ՄԱԳՆԱՏԷՍ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված <<Գնի առաջարկում>>՝ Հավելված 4,

ա/ 4-րդ չափաբաժնի մասով նշել է, որ գնային առաջարկ է ներկայացվում <<Մաքրող մածուկներ և փոշիներ 400գր>>-ի համար, այնինչ Հրավերով սահմանված է չափման միավորը տուփ՝ փաթեթավորված առնվազն 500գ կշռաբաժիններով,

բ/ 9-րդ չափաբաժնի մասով նշել է, որ գնային առաջարկ է ներկայացվում <<Սպունգ, ման լվանալու 90*65*45 մմ>>-ի համար, այնինչ Հրավերով սահմանված է՝ <<երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ>>:

Միևնույն ժամանակ «ՄԱԳՆԱՏԷՍ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված՝ <<Առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ>>՝ Հավելված 4.1, 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով չի հայտարարել և հավաստել, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 4-րդ և 9-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01>> ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով մերժել «ՄԱԳՆԱՏԷՍ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովը որոշեց.**

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. ապրիլի 14-ին ժամը՝ 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**.Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝

_____ Էդգար Տոնականյան

_____ Կարեն Մելքոնյան

_____ Անահիտ Ավագյան

_____ Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան